

laws, as well as makes other decisions, addresses messages and announcements. It is the author's opinion that the National Assembly should be defined not only as a legislative, but also as a representative authority. The full rights of the National Assembly are defined by the RA Constitution, as for the order of the National Assembly activities and its principles, and the formation of its subdivisions, they are defined in the RA Constitution and the Statute of the National Assembly. The article discovers the essence and contents of the constitutional norms of the National Assembly.

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ*

Խորհրդային իրավագիտության մեջ տասնամյակներ շարունակ որպես սահմանադրական իրավունքի տարբերիչ հատկանիշ նշվել է պատասխանատվության ինստիտուտի բացակայությունը: Հետխորհրդային իրականության պայմաններում, ժողովրդավարական սկզբունքներ որդեգրած պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար կարևորվեց ոչ միայն սահմանադրական արժեքների հռչակումը, այլև սահմանադրաիրավական նորմերի կենսագործումը: Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի գերակայության ընդունումն ուղեկցվեց սահմանադրական ինստիտուտները նաև սեփական սանկցիաներով կյանքի կոչելու անհրաժեշտության, սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կարևորության գիտակցմամբ: Իրավաբանական գրականության մեջ աստիճանաբար ընդունվեց այն տեսակետը, ըստ որի սահմանադրական իրավունքն ունի իր կարգադրագրերի գործունեության ապահովման սեփական մեթոդ, այսինքն՝ ունի պատասխանատվության իր ինստիտուտը: Պատասխանատվության սեփական ինստիտուտի առկայությունն իրավունքի ճյուղի լիարժեքության, ներքին բովանդակային ամբողջականության ու ինքնուրույնության վճռորոշ և անհրաժեշտ պայման է: Սահմանադրական պատասխանատվությունը իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, պետական իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ մասը, իշխանության ճյուղերի միջև գործող «զսպումների և հակակշիռների» կառուցակարգի անօտարելի տարրը¹: Սահմանադրական պատասխանատվությանը նվիրված ուսումնասիրություններում կարելի է հանդիպել պատասխանատվության նշված տեսակի տարբեր անվանումների. «սահմանադրա-(պետական)-իրավա-

¹ Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, մեմագրություն, Երևան, 2008, 516 էջ:

կան» կամ «սահմանադրական (կանոնադրային) պատասխանատվություն»՝ որպես սահմանադրական (կանոնադրային) իրավունքի ինքնուրույն ինստիտուտ²: Սակայն, գրականության մեջ առավել հաճախ հանդիպում են քննարկվող ինստիտուտի երկու անվանում՝ «սահմանադրական պատասխանատվություն» և «սահմանադրաիրավական պատասխանատվություն»: Ընդ որում, երկու դեպքում էլ հեղինակները նկատի ունեն միևնույն ինստիտուտը, և նշված անվանումները գործածում են որպես նույնական: Թեև կան հեղինակների կողմից վկայակոչվող տարբերակիչ որոշ հանգամանքներ: Այսպես, օրինակ, նշվում է, որ եթե սահմանադրական պատասխանատվության միակ նորմատիվ հիմքը Սահմանադրությունն է, և այն կոչված է ապահովելու միայն Սահմանադրության նորմերի իրացումը, ապա սահմանադրաիրավական պատասխանատվության նորմատիվ հիմքը սահմանադրական իրավունքի բոլոր աղբյուրներն են և նրա խնդիրն է սահմանադրաիրավական բոլոր նորմերի գործունեության ապահովումը:

Ի. Ա. Կրավենցը գտնում է, որ «սահմանադրական պատասխանատվություն» տերմինի օգտագործումն արդարացված է միայն այն դեպքում, երբ Սահմանադրության տեքստում նշվում է պետական մարմինների պատասխանատվության մասին, իսկ մնացած դեպքերում կարելի է խոսել սահմանադրաիրավական, պետաիրավական կամ հանրային-իրավական պատասխանատվության մասին³: Համանման դիրքորոշում ունեն նաև Ա. Ա. Բեզուգլովը և Ս. Ա. Սոլդատովը, ըստ որոնց «Սահմանադրական պատասխանատվությունը Սահմանադրության նորմերով նախատեսված պատասխանատվությունն է, որը կարող է կիրառվել սահմանադրական պարտականությունների խախտման դեպքում»⁴: Մենք գտնում ենք, որ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի խնդիրն է ապահովել ընդհանրապես սահմանադրական իրավունքի նորմերի պահանջների կատարումը, իսկ սահմանադրական իրավանորմերը չեն սպառնում միայն Սահմանադրությամբ ամրագրված նորմերով: Թեև Սահմանադրությունը սահմանադրական իրավունքի հիմնական աղբյուրն է, սակայն սահմանադրական իրավունքն ունի բազմաթիվ այլ աղբյուրներ. օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին», «Հանրաքվեի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կուսակցությունների մասին» և բազմաթիվ այլ օրենքներ ու այլ նորմատիվ իրավական ակտեր: Ն. Վ. Վիտրուկը նշում է, որ սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է⁵: Ի. Ա. Ումնովան առանձնացնում է «հանրային-իրավական պատասխանատվությունը»՝ նշե-

² St'u, օրինակ, **Витрук Н. В.** Конституционное правосудие в России (1991-2001 гг.). Очерки теории и практики, М., 2001, с. 440; **Колюшин Е. И.** Право и финансирование выборов, М., 1998, с. 127.

³ St'u **Кравец И. А.** Формирование российского конституционализма: проблемы теории и практики, М.-Новосибирск, 2002.

⁴ St'u **Безуглов А. А., Солдатов С. А.** Конституционное право России, В 3 т., Т. 2, Учебник для юридических вузов, М., 2001.

⁵ St'u **Витрук Н. В.** Конституционная ответственность: вопросы теории и практики // Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, М., 2001, с. 35.

լով, որ այն ավելի լայն է «պետաիրավական պատասխանատվության» հասկացությունից: Իր օբյեկտով և օբյեկտիվ կողմով հանրային-իրավական պատասխանատվությունը ներառում է ոչ միայն սահմանադրական (պետական) իրավունքի, այլև վարչական, ֆինանսական, բնապահպանական և իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները՝ կապված պետական իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների լիազորությունների, դրանց և դատական մարմինների միջև փոխհարաբերությունների կարգավորման հետ՝ հանրային իշխանության գործառույթների իրականացման գործընթացում⁶: Մեր կարծիքով, Ի. Ա. Ումնովան սահմանադրական իրավունքի առարկան նույնացնում է այն հասարակական հարաբերությունների հետ, որոնք կարգավորվում են իրավունքի այլ, թեկուզ սահմանադրական իրավունքին մեթոդաբանական տեսանկյունից մոտ ճյուղերի կողմից՝ այն հիմքով, որ այդ իրավունքի ճյուղերը կանոնակարգում են պետաիշխանական սուբյեկտների գործունեությունը՝ ուղղված հանրային խնդիրների լուծմանը: Սահմանադրական իրավունքը սահմանում է պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունները և կարգավորում դրանց փոխհարաբերությունների առավել էական, կարևոր կողմերը, իսկ իրավունքի մյուս ճյուղերը, որոնք առարկայական մեթոդաբանական չափանիշի տեսանկյունից սերտ են սահմանադրական իրավունքին, բացահայտում են պետական մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ իրենց կարգավորման առարկայի շրջանակում: Գտնում ենք, որ «հանրային-իրավական պատասխանատվություն» կատեգորիան կարելի է համարել գիտական վերացարկում, քանի որ այն միավորում է իրավունքի տարբեր ճյուղերին բնորոշ պատասխանատվության միջոցներ այնպիսի մեզաճյուղի (վերճյուղի) շրջանակում, ինչպիսին «հանրային իրավունքն» է: Ըստ Ն. Վ. Վիտրուկի, սահմանադրական պատասխանատվությունից բացի պետք է տարբերել նաև պետական-իրավական պատասխանատվություն (որը դրսևորվում է պառլամենտական պատասխանատվության, վարչական պատասխանատվության և դատական իրավունքով նախատեսված պատասխանատվության ձևով), մունիցիպալ պատասխանատվություն ու հանրային-իրավական պատասխանատվության այլ ճյուղային տեսակները, ինչպես և մասնավոր-իրավական պատասխանատվության ճյուղային տեսակները (քաղաքացիաիրավական պատասխանատվություն և այլն), որոնք սահմանված են դաշնային օրենքներով և ՌԴ սուբյեկտների օրենքներով ու այլ նորմատիվ ակտերով: Սահմանադրական պատասխանատվությունն ունի պոզիտիվ ասպեկտ և կարելի է ասել, որ այն գերակա է վերջինիս բովանդակության մեջ⁷: Համամիտ լինելով Ն. Վ. Վիտրուկի այն կարծիքին, որ սահմանադրական պատասխանատվությունն ունի պոզիտիվ ասպեկտ, չենք կիսում նրա այն տեսակետը, որ սահմանադրական պատասխանատվությունից պետք է առանձնացնել պետական-իրավական պատասխանատվության ինստիտուտը: Պետական-իրավական պատասխանատվությունը ներառվում է սահմանադրական պատասխանատվության մեջ, որի կարևոր սուբյեկտը հենց պետությունն է՝ որպես սահմանադրաիրավական հա-

⁶ Стен Умнова И. А. Конституционные основы современного российского федерализма, М., 2000, с. 219-220:

⁷ Стен Витрук Н. В. Ыշվ. աշխ., էջ 35-36:

րաբերությունների հատուկ մասնակից: Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներ են նաև մունիցիպալ մարմինները, ինչպես և սահմանադրական իրավահարաբերությունների մյուս մասնակիցները:

Անվիճելի է, որ սահմանադրական պատասխանատվությունը կիրառվում է սահմանադրական իրավանորմերի խախտման դեպքում (խոսքը սահմանադրական պատասխանատվության ռետրոսպեկտիվ կամ նեգատիվ ասպեկտի մասին է), սակայն ոչ բոլոր իրավախախտումների դեպքում են կիրառվում սահմանադրաիրավական սանկցիաներ: Ֆ. Մ. Սկիֆսկին այն դիրքորոշումն ունի, ըստ որի «Սահմանադրաիրավական պատասխանատվությունը լայն առումով պատասխանատվությունն է ցանկացած իրավախախտման համար, քանի որ ճյուղային իրավաբանական նորմերի ցանկացած խախտում վերջին հաշվով ունեցողություն է պետության կողմից առավել բարձր մակարդակով՝ սահմանադրական իրավանորմերի մակարդակով պահպանվող հասարակական հարաբերությունների համակարգի նկատմամբ»⁸: Մենք գտնում ենք, որ թե՛ տեսական և թե՛ գործնական առումով ճիշտ է սահմանադրական պատասխանատվությունը դիտարկել որպես ցանկացած իրավախախտման, դիցուք, կարգապահական զանցանքի համար կիրառվող պետական հարկադրանքի միջոց: Այս դեպքում սահմանադրական պատասխանատվությունը հանիրավի կհամարվի ոչ թե իրավաբանական պատասխանատվության ճյուղային տեսակ, այլ կնույնանա այնպիսի ընդհանուր (սեռային) հասկացության հետ, ինչպիսին «իրավաբանական պատասխանատվությունն» է: Սահմանադրության և այլ օրենքների խախտման դեպքում՝ ըստ կատարված իրավախախտման բնույթի, կարող է կիրառվել ինչպես սահմանադրական, այնպես էլ վարչական, քրեական կամ պատասխանատվության այլ տեսակ: Նեգատիվ առումով սահմանադրական պատասխանատվության կիրառման համար անհրաժեշտ է հիմք, այն է՝ սահմանադրական իրավախախտում կամ դելիկտ: Մ. Վ. Բազլայն օգտագործում է «սահմանադրաիրավական պատասխանատվություն» և «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունները՝ դրանց միջև որևէ տարբերություն չդնելով⁹:

Մեր կարծիքով, կարևորը ոչ թե անվանումների, այլ դրանց բովանդակության և էության հարցն է: Ըստ այդմ, առավել նախընտրելի ենք համարում «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունը, որի սահմանները որոշվում են սահմանադրական իրավունքի շրջանակներով և որը գործածության համար առավել հարմար է: Ա. Վ. Զինովևը գրում է, որ սահմանադրականության տեսությունն ընդունում է հանրային իշխանության ոչ պատշաճ կազմակերպման և գործունեության համար սահմանադրական պատասխանատվության սահմանման անհրաժեշտությունը: Ըստ նրա՝ սահմանադրական պատասխանատվությունը միայն այն պատասխանատվությունն է, որը կիրառվում է Սահմանադրության խախտման համար և որը նախատեսված է սահմանադրական իրավունքի նորմերով: Միաժամանակ, պետության ու հասարակության կյանքի հիմունքները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները

⁸ Стів Скифский Ф. М. Ответственность за конституционные правонарушения, Тюмень, 1998.

⁹ Стів Баглай М. В., Габричидзе Б. Н. Конституционное право Российской федерации, М., 1996, с. 39.

րը կարող են խախտվել ոչ միայն պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց, այլև մյուս սուբյեկտների կողմից, որոնց նկատմամբ կիրառվում է իրավական պատասխանատվություն՝ քրեական, վարչական, քաղաքացիաիրավական: Քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված են քրեական պատասխանատվություն ու պատիժ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ պետության սահմանադրական կարգի հիմունքների դեմ ուղղված ոտնձգությունների համար: Սահմանադրաիրավական պատասխանատվությունը, ըստ Ա. Վ. Ջինովևի, կիրառվում է ոչ թե պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ մյուս սուբյեկտների նկատմամբ, ովքեր խախտել են Սահմանադրությունը և որոնց շրջանակն ավելի լայն է: Սահմանադրական պատասխանատվությունից հետո կարող է վրա հասնել սահմանադրաիրավական պատասխանատվությունը, որին կարող են ենթարկվել Սահմանադրության խախտման համար պաշտոնից ազատված անձինք¹⁰: Հեղինակը գտնում է, որ սահմանադրաիրավական պատասխանատվությունը «Սահմանադրության խախտման համար սահմանադրական և այլ իրավական պատասխանատվությունն է»¹¹: Փաստորեն, Ա. Վ. Ջինովևը հակասում է ինքն իրեն: Նախ պնդում է, որ «սահմանադրաիրավական պատասխանատվություն» և «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունները տարբեր են, իրենց սուբյեկտներով չեն համընկնում, ապա նշում է, որ սահմանադրաիրավական պատասխանատվությունը նշանակում է սահմանադրական և այլ իրավական պատասխանատվություն:

Իրավաբանական պատասխանատվության ցանկացած տեսակ՝ քրեական, քաղաքացիական, վարչական, որը համապատասխանում է իրավունքի որոշակի ճյուղի և բաղկացած է տվյալ ճյուղային պատկանելության իրավանորմերից, միաժամանակ կոչվում է իրավական՝ քրեաիրավական, քաղաքացիաիրավական, վարչաիրավական պատասխանատվություն: Սահմանադրական իրավունքի ճյուղին համապատասխանող պատասխանատվության ճյուղային տեսակը՝ սահմանադրական պատասխանատվությունը բացառություն չի կազմում, բաղկացած է սահմանադրական իրավանորմերից և նույնպես կարող է անվանվել «սահմանադրաիրավական պատասխանատվություն»: Գրականության մեջ նշվում է, որ լայն առումով սահմանադրաիրավական պատասխանատվության նորմատիվ հիմքն են սահմանադրական իրավունքի բոլոր աղբյուրները, սուբյեկտներն են սահմանադրաիրավական հարաբերությունների բոլոր մասնակիցները, այդ թվում՝ քաղաքացիները, կոլեկտիվ կազմավորումները: Իսկ նեղ իմաստով սահմանադրաիրավական պատասխանատվությունը համընկնում է սահմանադրական պատասխանատվության հետ, որի աղբյուրը Սահմանադրությունն է, իսկ սուբյեկտները՝ պետական իշխանության մարմինները, պաշտոնատար անձինք և տեղական ինքնակառավարման մարմինները:

Համակարծիք ենք Ա. Ս. Սերգենի հետ, ըստ որի «սահմանադրական պատասխանատվությունն» ու «սահմանադրաիրավական պատասխանատվությունը» հավասարաթեք հասկացություններ են և նշանակում են իրավաբանական պա-

¹⁰ Ст'ю Зиновьев А. В. Конституционная ответственность // Теория и практика государственного управления, М., 2003, с. 4.

¹¹ Նույն տեղում, էջ 5:

տասխանատվության լիարժեք տեսակ¹²: Ինչպես վերը նշեցինք, կարևորը ոչ թե պատասխանատվության անվանումն է, «նմանալ արժեքը», այլ բովանդակությունը և էությունը: Հատկանշական է, որ անկախ անվանումից՝ հեղինակները համակարծիք են այն հարցում, որ սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության տեսակ է, որի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել սահմանադրական պատասխանատվության էությունը: Ընդհանրապես, էությունն արտահայտում է երևույթի անհրաժեշտ, կայուն, օրինաչափ, ներքին կապերը, անօտարելի, մնայուն հատկանիշները¹³: Փիլիսոփայական գրականության մեջ նշվում է, որ «էությունը երևույթի մեջ եղած անհրաժեշտ որակներն են, որոնք կարելի է բացահայտել երևույթների տվյալ դասի հատկանիշների խմբի վերլուծության և ընդհանրացման արդյունքում: Տարբեր երևույթներ կարող են ունենալ մեկ ընդհանուր էություն, եթե դրանք պատկանում են երևույթների միևնույն դասին»¹⁴:

Ելնելով նշված դրույթից և հիմք ընդունելով այն, որ իրավաբանական պատասխանատվությունն ու սահմանադրական պատասխանատվությունը փոխհարաբերվում են որպես սեռային և տեսակային հասկացություններ, փորձենք իրավաբանական պատասխանատվության էության բացահայտման միջոցով պարզել սահմանադրական պատասխանատվության էությունը՝ հաշվի առնելով վերջինիս բնորոշ առանձնահատկությունները:

Գրականության մեջ որպես իրավաբանական պատասխանատվության էություն հիմնականում նշվում են՝

1) իրավական նորմում նախատեսված պահանջի կատարման պարտականությունը¹⁵,

2) իրավական կարգադրագրերի խախտման դեպքում՝ նյութական, իրավական կամ անձնական բնույթի սահմանափակումներ ու զրկանքներ կրելու պարտականությունը¹⁶,

3) հաշվետու լինելու պարտականությունը¹⁷,

4) իրավանորմի խախտման համար կիրառվող պետական հարկադրանքը¹⁸,

5) իրավախախտ սուբյեկտի պատժումը¹⁹,

6) իրավական նորմի սանկցիայի իրացումը²⁰,

¹² Տե՛ս **Сергеев А. С.** Конституционная ответственность в Российской Федерации // Конституционное и муниципальное право, N 4, 2002, с. 24.

¹³ Տե՛ս **Философский энциклопедический словарь**, М., 1983, с. 665.

¹⁴ Տե՛ս **Шептилин А. П.** Система категорий диалектики, М., 1967, с. 265.

¹⁵ Տե՛ս **Липинский Д. А.** Проблемы юридической ответственности, СПб., 2004, с. 14.

¹⁶ Տե՛ս **Черданцев А. Ф., Кожевников С. Н.** О понятии и содержании юридической ответственности // Правоведение, М., 1976, N 5, с. 41-49.

¹⁷ Տե՛ս **Тархов В. А.** О юридической ответственности, Саратов, 1978, с. 14.

¹⁸ Տե՛ս **Самощенко И. С., Фарукшин М. Х.** Ответственность по советскому законодательству, М., 1971, с. 6.

¹⁹ Տե՛ս **Малеин Н. С.** Юридическая ответственность и справедливость, М., 1992, с. 19; **Նույնի՝** Об институте юридической ответственности // Труды по правоведению, Тарту, 1989, с. 30.

²⁰ Տե՛ս **Явич Л. С.** Право и социализм, М., 1982, с. 136.

- 7) իրավաչափ վարքագծի խրախուսումը²¹,
 - 8) պարտքի զգացումը²²,
 - 9) իրավախախտի և պետության (լիազոր մարմինների) միջև ծագող իրավահարաբերությունը²³,
 - 10) սուբյեկտի արարքի գնահատումը (դատապարտումը, պարսավումը), որն արտահայտվում է դատարանի դատավճռով կամ այլ ակտով²⁴,
 - 11) իրավախախտման նկատմամբ հասարակության արձագանքը²⁵:
- Իրավաբանական պատասխանատվության էության թվարկված սահմանումները փոխկապակցված են, բխում են մեկը մյուսից, լրացնում միմյանց. մեր խնդիրը, սակայն, դրանց քննարկումն է այն տեսանկյունից, թե դրանք որքանով են ընդունելի սահմանադրական պատասխանատվության համար:
- Կարծում ենք, որ պարտականությունը էական հատկանիշ է իրավաբանական պատասխանատվության բոլոր տեսակների, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվության համար: Առանց պարտականության իրավաբանական պատասխանատվությունը գոյություն ունենալ չի կարող, սակայն պատասխանատվությունը համարժեք չէ «պարտականություն» հասկացությանը: Պետությունը, սահմանելով պարտականություններ և դրանք հասցեագրելով իրավահարաբերությունների սուբյեկտներին՝ վերջիններիս պարտավորեցնում է բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները (պոզիտիվ իրավաբանական պատասխանատվություն), իսկ չկատարելու դեպքում՝ դրանց նկատմամբ կիրառվում են նեգատիվ կամ ռետրոսպեկտիվ պատասխանատվության միջոցներ: Ընդ որում, պարտականությունը, որպես իրավաբանական (մասնավորապես, սահմանադրական) պատասխանատվության էություն, դիտարկվում է մի քանի տեսանկյունից՝ իրավանորմում նախատեսված պահանջի կատարման պարտականություն, իրավախախտում կատարելու դեպքում զրկանքներ ու սահմանափակումներ կրելու պարտականություն, հաշվետու լինելու պարտականություն: Մենք վերապահումով ենք մոտենում սահմանափակումներ կրելու պարտականությունը սահմանադրական պատասխանատվության էություն համարող դիր-

²¹ Տե՛ս **Разгильдяев Б. Т.** Задачи уголовного права Российской Федерации и их реализации, Саратов, 1993, с. 152.

²² Տե՛ս **Фаткулин Ф. Н.** Проблемы теории государства и права: Курс лекций. Казань, 1987, с. 265; **Смирнов А. Б.** Юридическая ответственность осужденных в пени-тенциарных учреждениях (теоретико-правовой аспект) // Автореф. дис. к. ю. н., М., 1990, с. 7; **Венедиктов В. С.** Юридическая ответственность по советскому трудовому праву: Учеб. пособие, Киев, 1989, с. 19.

²³ Տե՛ս **Булатов А. С.** Юридическая ответственность (общетеоретические проблемы) // Автореф. дис. к. ю. н., Л., 1985, с. 12; **Сенякин И. Н.** Понятие, признаки и виды юридической ответственности // Теория государства и права, Под ред. Н. И. Матузова, А. В. Малько, М., 2004, с. 543 и др.

²⁴ Տե՛ս **Демидов Ю. А.** Социальная ценность и оценка в уголовном праве, М., 1975, с. 165; **Огурцов Н. А.** Правоотношения и ответственность в советском уголовном праве, Рязань, 1976, с. 159.

²⁵ Տե՛ս **Лившиц Р. З.** Теория права, М., 1994, с. 26; **Краснов М. А.** Ответственность в системе народного представительства (методологические подходы), М., 1995, с. 26.

քորոշումներին: Սահմանադրական պատասխանատվությունն ավելի լայն է և չի նույնանում սահմանադրական իրավախախտման սուբյեկտի՝ իրավական սահմանափակումներ ու զրկանքներ կրելու պարտականության հետ, թեև սուբյեկտի համար առաջացնում է անձնական կամ գույքային բնույթի բացասական հետևանքներ:

Սահմանադրական պատասխանատվության միջոցը կիրառվում է պետական հարկադրանքի ուժով: Պետաիրավական հարկադրանքը և սուբյեկտի պարտականությունը կապված են այնքանով, որ առաջինը հանդիսանում է երկրորդի չկատարման հետևանք: Սահմանադրական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստի հիման վրա պատասխանատվության պոզիտիվ ասպեկտն իր տեղը գիջում է նեգատիվ ասպեկտին և տեղի է ունենում սուբյեկտի կարգավիճակի փոփոխություն՝ իրավաբանորեն պարտավոր սուբյեկտից նա վերածվում է պետական հարկադրանք կրող սուբյեկտի: Որոշ հեղինակներ սահմանադրական պատասխանատվությունը բնորոշում են որպես սահմանադրական իրավունքում հարկադրանքի տեսակ: Վ. Ի. Չերվոնյուկը գտնում է, որ սահմանադրական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջանում են լիազոր պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքական գործունեության մյուս սուբյեկտների կողմից սահմանադրաիրավական պահանջներից շեղվելու դեպքում²⁶:

Կարծում ենք, որ սահմանադրական պատասխանատվությունն ավելի լայն հասկացություն է, քան սոսկ «անբարենպաստ հետևանքները»: Նշված հետևանքներն առաջանում են հենց սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի գործադրման արդյունքում, բայց իրենցով չեն սպառում սահմանադրական պատասխանատվության ողջ բովանդակությունը: Բացի այդ, որպես սահմանադրական իրավանորմերի պահանջներից շեղվող սուբյեկտներ, մատնանշվում են քաղաքական գործունեության սուբյեկտները: Սահմանադրական պատասխանատվության էությունը դրսևորվում է պետաիշխանական հարաբերությունների մասնակից մարմիններին և անձանց որոշակի իրավունքներից զրկմամբ, նրանց նկատմամբ սահմանադրաիրավական սանկցիաների կիրառմամբ: Ըստ Օ. Ե. Կուլտաֆինի՝ «սահմանադրաիրավական պատասխանատվությունը իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, որը կիրառվում է սահմանադրական իրավունքի նորմերով նախատեսված բացառիկ դեպքերում: Այն չի կարող կիրառվել միշտ, երբ խոսքը գնում է սահմանադրաիրավական հարաբերությունների խախտումների մասին, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Նրա հիմնական նպատակը Սահմանադրության և սահմանադրաիրավական այլ նորմերի պաշտպանությունն է իրեն հատուկ միջոցներով: Այս խնդիրը լուծելիս՝ սահմանադրաիրավական պատասխանատվությունը զուգորդվում է իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների հետ, որոնք, ի թիվս այս խնդրի, իրականացնում են նաև ՌԴ իրավական համակարգի պաշտպանության բազմաթիվ այլ գործառույթներ, ընդ որում անկյունաքարային դարձնելով հենց Սահմանադրության և սահմանադրաիրավական այլ նորմերի

²⁶ Стів Червонюк В. И. Конституционное право, М., 2003, с. 37-38.

պաշտպանությունը»²⁷: Տարակարծությունների տեղիք է տալիս այն միտքը, որ «սահմանադրաիրավական պատասխանատվությունը ... չի կարող կիրառվել միշտ, երբ խոսքը գնում է սահմանադրաիրավական հարաբերությունների խախտումների մասին, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա»: Հարց է ծագում, թե ինչպե՞ս կամ ի՞նչ չափանիշներով է որոշվում, թե երբ կա դրա անհրաժեշտությունը: Սահմանադրական պատասխանատվությունը բնորոշվում է նաև որպես սահմանադրական իրավահարաբերությունների ոլորտում պետական հարկադրանքի կիրառում: Պետական հարկադրանքի և իրավաբանական պատասխանատվության (մասնավորապես՝ սահմանադրական պատասխանատվության) հարաբերակցության վերաբերյալ գրականության մեջ կա երկու հակադիր մոտեցում:

Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ «իրավաբանական պատասխանատվության հիմնական էական հատկանիշներն են իրավախախտին դատապարտումը և պետական հարկադրանքը»²⁸, իսկ երկրորդ տեսակետն այն է, որ «իրավաբանական պատասխանատվությունը պետական հարկադրանքի տեսակ է»²⁹:

Մենք այն կարծիքին ենք, որ նշված երկու տեսակետը համադրելի են, քանի որ պետական հարկադրանքի կարևոր դրսևորում է իրավաբանական պատասխանատվության միջոցի կիրառումը, և իրավաբանական պատասխանատվության անհրաժեշտ ու պարտադիր հատկանիշ է պետական հարկադրանքի ուժով ապահովված լինելը: Սակայն ասվածը վերաբերում է միայն պատասխանատվության նեգատիվ ասպեկտին: Պետական հարկադրանքը չի կարող պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության էական հատկանիշ լինել, քանի որ այս դեպքում սուբյեկտների կողմից դրսևորվում է իրավաչափ վարքագիծ, պարտականությունները կատարվում են կամավոր ձևով, և բացակայում է պետական հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը: «Պատասխանատվության էությունը, նրա անքակտելի հատկանիշը պատիժն է, իրավախախտին պատժելը»³⁰, -գրում է Ն. Ս. Մալեինը: Սակայն իրավաբանական պատասխանատվության էությունը չի հանգում միայն պատժին: Համապատասխանաբար, սահմանադրական պատասխանատվությունն իր էությամբ միայն պատժի կիրառումը չէ: Ինչպես նշում է Գ. Բ. Դանիելյանը, «իրավական պատասխանատվությունը ավելի լայն հասկացություն է, քան պատիժը կամ տույժը. պատասխանատվությունը ոչ միայն ներառում է պատժի կամ տույժի, այլև ուղղման նպա-

²⁷ Տե՛ս Кутафин О. Е. Предмет конституционного права Российской Федерации, М., 2002, с. 418.

²⁸ Տե՛ս Самощенко И. С., Фарукшин М. Х. Նշվ. աշխ., էջ 6:

²⁹ Տե՛ս, օրինակ, Малько А. В. Краткий учебник по теории государства и права, Пенза, 2001, с. 146; Витрук Н. В. Развитие теории юридической ответственности в решениях Конституционного Суда Российской Федерации // Проблемы правовой ответственности государства, его органов и служащих: Материалы круглого стола, 25-26 мая 2000 г., Белгорода, 2000, с. 102.

³⁰ Տե՛ս Малеин Н. С. Юридическая ответственность и справедливость, М., 1992, с. 36.

տակով իրավախախտում թույլ տված անձի նկատմամբ տարաբնույթ ներգործության այլ միջոցների կիրառման տարրեր»³¹: Թեև սահմանադրական պատասխանատվությունն իր ռետրոսպեկտիվ կամ նեգատիվ ասպեկտով սերտորեն կապված է պետական հարկադրանքի, իրավանորմի սանկցիայի իրացման, պատժի հետ, սակայն չի կարելի սահմանադրական պատասխանատվության էությունը անվերապահորեն համարել սանկցիայի իրացումը, քանի որ, ինչպես նշում է Օ. Է. Լեյստը, «Պատասխանատվության հասկացությունն իր ծավալով լայն է սանկցիայի կիրառումից»³²: Ինչ վերաբերում է պարտքի զգացմանը, իրավաչափ վարքագծի խրախուսմանը, ապա վերջիններս բնորոշ են սահմանադրական պատասխանատվության պոզիտիվ ասպեկտին, ճիշտ այնպես, ինչպես իրավախախտման նկատմամբ հասարակության բացասական արձագանքը, սուբյեկտի արարքի պարսավումը և դատապարտումը պատասխանատվության նեգատիվ ասպեկտին բնորոշ էական հատկանիշներ են: Իրավունքում խրախուսման ինստիտուտը կոչված է խթանելու անհատի իրավաչափ վարքագիծը, արմատավորելու հարգալից վերաբերմունք սոցիալական արժեքների նկատմամբ, նպաստելու պարտականությունների կատարմանը: Խրախուսման միջոցների օրենսդրական սահմանումը հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության իրացման կամավոր ձևի նորմատիվ ամրագրումը: Ընդ որում, իրավաբանական պատասխանատվության կամավոր ձևը կարող է իրացվել ինչպես իրավախախտում կատարելուց առաջ, այնպես էլ հետո: Պետությունը շահագրգռված է իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իրավախախտում կատարած անձանց կողմից այնուհետ դրական վարքագծի դրսևորման մեջ: Սակայն իր «Ֆակուլտատիվության» ուժով խրախուսումը չի կարող լինել պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության էությունը, այնպես, ինչպես պարսավումը չի կարող հանդիսանալ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության էությունը:

Գրականության մեջ տեսակետ կա, ըստ որի սահմանադրական պատասխանատվությունն իր էությամբ իրավահարաբերություն է պետության՝ ի դեմս նրա լիազոր մարմինների և իրավախախտի միջև: Ինչ խոսք, իրավահարաբերությունների և սահմանադրական պատասխանատվության միջև առկա է օրգանական կապը: Պատասխանատվությունը գոյություն ունի և անմիջականորեն կիրառվում է իրավահարաբերություններում, այսինքն՝ իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններում: Պատասխանատվության կիրառման հետ կապված իրավահարաբերությունները իրավախախտի և պետական մարմինների միջև իրավական կապերն են՝ շարժընթացի մեջ: Այդ հարաբերությունների շրջանակում լուծվող հիմնական հարցերն են իրավախախտման առկայության կամ բացակայության, սանկցիա կիրառելու անհրաժեշտության և կոնկրետ սանկցիայի որոշման, իրավախախտման մեջ մեղավորի իրավասահմանափակումների (կամ պատասխանատվությունից ու [կամ] պատժից ազատման), այդ պարտականությունների և իրավասահմանափակումների

³¹ Տե՛ս **Դանիելյան Գ. Բ.** Վարչական պատասխանատվություն, Երևան, 2002, էջ 79:

³² Տե՛ս **Лейст О. Э.** Санкции и ответственность по советскому праву (теоретические проблемы), М., 1981, с. 102-103.

իրացման հարցերը: Պատասխանատվությունն այստեղ դիտարկվում է կոնկրետ որպես քաղաքացու կամ կազմակերպության պատասխանատվություն՝ որոշակի իրավախախտման համար: Իրավահարաբերությունները կազմում են սահմանադրական պատասխանատվության իրացման համար խիստ անհրաժեշտ «կենսական միջավայրը»:

Սահմանադրական պատասխանատվության էության բացահայտումը դյուրին չէ, քանի որ դեռևս չի մշակվել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի միասնական, սպառիչ և ընդգրկուն սահմանում: Եվ ինչպես նշել է Վ. Ա. Կուչինսկին, «Պատասխանատվություն» տերմինի օգտագործումը տարբեր իմաստներով որոշ գիտնականների մոտ է հոռետեսական եզրակացությունների՝ կապված պատասխանատվության միասնական հասկացության մշակման հնարավորության հետ³³: Իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների պես սահմանադրական պատասխանատվությունը ևս պետական հարկադրանքի միջոց է՝ հիմնված իրավախախտման իրավաբանական և հասարակական դատապարտման վրա, որն արտահայտվում է իրավախախտի համար որոշակի բացասական հետևանքների առաջացմամբ³⁴: Սահմանադրական պատասխանատվությանը (նեգատիվ ասպեկտով) նույնպես բնորոշ է պետական հարկադրանքը՝ իրավախախտի համար բացասական հետևանքների առաջացման ձևով: Սակայն սահմանադրական պատասխանատվությանը բնորոշ հարկադրանքն ունի իր առանձնահատկությունները: Օրինակ, եթե քրեական պատասխանատվությանն ու պատժին բնորոշ են անձնական և գույքային բնույթի զրկանքները, ազատազրկումը, ապա սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի իրացման հետևանքներն այլ բնույթ ունեն: Սահմանադրական պատասխանատվությանը բնորոշ չեն հարկադրանքի այնպիսի միջոցները, ինչպիսին են ազատազրկումը, կալանքը և այլն: Հատկանշական է, որ սահմանադրական պատասխանատվությունը ոչ միայն սահմանադրական իրավանորմների խախտման համար պատիժ է բովանդակում, այլև կատարում է իրավավերականգնողական գործառույթ: Բայց եթե քաղաքացիական իրավունքում վերականգնումը արտահայտվում է վնասի փոխհատուցմամբ, նախնական վիճակի վերականգնմամբ, ապա սահմանադրական իրավունքում այն կապված է օրենքի խախտումները վերացնելու և պետական ապարատի, պատգամավորների, պաշտոնատար անձանց նորմալ գործունեության, քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրականացման, պարտականությունների կատարման ապահովման, անհատական ու հասարակական շահերի զուգակցման հետ: Սահմանադրական պատասխանատվությունը կիրառվում է սահմանադրական իրավունքի նորմերի խախտման դեպքում: Սակայն նշված նորմերի խախտման համար կարող է կիրառվել նաև պատասխանատվության այլ տեսակ: Այսպես, օրինակ, ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի: Եթե սահմանադրա-

³³ Ст'ю Кучинский В. А. Юридические аспекты ответственности личности // Актуальные проблемы теории социалистического государства и права, М., 1974, с. 194.

³⁴ Ст'ю Габричидзе Б. Н., Чернявский А. Г. Конституционное право России, Учебник для ВУЗов, М., 2004, с. 244.

կան այս արգելքը խախտվի, ապա իրավախախտ անձը կենթարկվի ոչ թե սահմանադրական, այլ վարչական, քրեական պատասխանատվության ու պատժի: Միաժամանակ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող են կիրառվել սահմանադրական, ապա իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակները: Օրինակ, երկրի նախագահի նկատմամբ պաշտոնանկության ձևով սահմանադրական պատասխանատվություն կիրառելուց հետո նրան կարող են ենթարկել քրեական պատասխանատվության ու պատժի: Հետաքրքիր է սահմանադրական պատասխանատվության լեհական հայեցակարգը: Լեհաստանում սահմանադրական պատասխանատվության միջոցները կիրառվում են ոչ միայն այն անձանց նկատմամբ, ովքեր այդ պահին պաշտոն են զբաղեցնում, այլև նրանց նկատմամբ, ովքեր արդեն տվյալ պաշտոնը չեն զբաղեցնում, բայց ենթակա են սահմանադրական պատասխանատվության օրենքի խախտման փաստից տաս տարվա ընթացքում, իսկ երկրի նախագահը սահմանադրական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև պոստը թողնելուց տաս տարի հետո³⁵:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարող ենք արձանագրել, որ սահմանադրական պատասխանատվությունը սահմանադրաիրավական բարդ ինստիտուտ է, որի նպատակը սահմանադրական իրավակարգի պահպանումն է, սահմանադրականության ռեժիմի հաստատումը: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կայացումը և զարգացումն անհրաժեշտ է նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման, եվրոպական պետությունների ընտանիքին ինտեգրման, հուսալի և պատասխանատու գործընկերոջ համբավի, միջազգային վարկի ու հեղինակության ամրապնդման, արդյունավետ և նպաստավոր արտաքին քաղաքականության իրականացման համար:

О ПОНЯТИИ И СУЩНОСТИ ИНСТИТУТА КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Р. Х. АКОПЯН

В советской юридической науке долгое время не рассматривался институт конституционной ответственности, а в постсоветских странах, в том числе в Республике Армения, конституционная ответственность стала предметом серьезных научных исследований. В статье раскрываются понятие и суть института конституционной ответственности. Данный институт исследуется с разных позиций, как

- особый вид юридической ответственности;
- самостоятельный институт конституционного права;
- составная часть конституционного статуса органов государственной власти;
- элемент механизма “сдержек и противовесов” между ветвями власти;
- необходимый институт обеспечения конституционного правопорядка и законности в государстве.

³⁵ St'u Виатр Е. Д. Конституционная ответственность в Польше после 1989 года // Конституционное право: Восточноевропейское обозрение, 1996, N 2, с. 92.

REMARKS ON THE ESSENCE AND CONCEPTION OF THE INSTITUTION OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY

R. KH. HAKOBYAN

In the soviet science of law, the institution of constitutional responsibility has not been investigated for decades, but in post-soviet states, including Armenia, the constitutional responsibility is considered to be very important as an institution for providing the work of constitutional legal norms. In the article the constitutional responsibility is studied as:

- a special kind of legal responsibility,
- an independent constitutional and legal institution,
- a component of constitutional status of state power authorities,
- a part of mechanism for pacification and counterbalanced among the branches of the state power,
- a tool for provision of constitutional order and legality,

The article is devoted to the institution of the constitutional responsibility as a concept of an object for scientific study, and also to the discovery of its essence.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՉ

Ա. Յ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.4-րդ հոդվածն (այսուհետ՝ մեկնաբանվող հոդված) ամբողջությամբ իր ամրագրումն է ստացել 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում և այն թղթակցում է նաև Սահմանադրության 77-րդ հոդվածի հետ:

Մինչև Սահմանադրության 2005 թվականի փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի խմբագրությամբ Սահմանադրության 77-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը սահմանում էր, որ Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ, իսկ 83-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ, նշանակում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահ:

Հիշատակված սահմանադրական նորմերի վերլուծությունից հետևում էր, որ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը ձևավորվում էր բացառապես Ազգային ժողովի կողմից և ենթակա էր միայն նրան: Այդ հիմքերի առկայությամբ պայմանավորված, պետական մարմինների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության հիմնական գործառույթները Ազգային ժողովն իրականացնում էր Ազգային ժողովի վերահսկիչ պալատի միջոցով:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, բացի այն հանգաման-